*Հավելված 5*
*«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*

***N «ՀՀ ԱՆ ԱՇԲԾ-ՇՀԾՁԲ-11/1-2014/1» ծածկագրով***
***ընթացակարգի գնահատող հանձնաժողովին***

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**
**ԴԻՄՈՒՄ**

-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*

«ՀՀ ԱՆ ԱԾԻԳ» ՊՀ-ի կողմից N ***«ՀՀ ԱՆ ԱՇԲԾ-ՇՀԾՁԲ-11/1-2014/1»*** ծածկագրով հայտարարված ընթացակարգի .........չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի

*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

**3)** -------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------**-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝**

*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*

-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------:

*Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե*

**4)** -------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------**-ի հասցեն և հեռախոսի համարն է՝**

*Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)*

-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------:

*Մասնակցի հասցե, հեռախոսի համար*

----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
(ստորագրությունը)

Կ. Տ.

«______» ___________ 201   թ.
(ամսաթիվը, ամիսը)

*Հավելված 5.1*
*«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*

***N «ՀՀ ԱՆ ԱՇԲԾ-ՇՀԾՁԲ-11/1-2014/1» ծածկագրով***
***ընթացակարգի գնահատող հանձնաժողովին***

**ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ**

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ***«ՀՀ ԱՆ ԱՇԲԾ-ՇՀԾՁԲ-11/1-2014/1»*** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------ -ն առաջարկում է պայմանագիրը

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կատարել համաձայն հետևյալ գների՝

**(ՀՀ դրամ)**

| **N** | **Ծառայության անվանումը** | **Արժեք**[1] | **ԱԱՀ**[2] | **Առաջարկված գինը**[3] **/տառերով և թվերով/** |
|---|---|---|---|---|
| ***1*** | ***2*** | ***3*** | ***4*** | ***5=3+4*** |
| **1.** | Ինտերնետ կապի տրամադրում | | | |
| **2.** | Տվյալների փոխանցում | | | |

**Հրավերով ներկայացված Հավելված 1-ով ներկայացված աղյուսակը լրացնելը պարտադիր է:*

***ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի համաձայն՝* ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:***
** Ապրանքի երաշխիքային սպասարկման ժամկետը սահմանվում է Ապրանքի մատակարարման պահից սկսած 3 (երեք) տարի:*

------------------------------------------------------------------------------------------------ ------------------------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«______» ____________ 20____թ.
(ամսաթիվը, ամիսը)

---

[1] *3-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
[2] *Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*
[3] *Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:*

*Նախագիծ*

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**«ՀՀ ԱՆ ԱՇԲԾ-ԾՀԾՁԲ-11/1-2014/1»**

ք. Երևան «  » «  » 2014թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Քրմոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ---------------ն, ի դեմս տնօրեն -------------(այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ինտերնետ կապի տրամադրման և սպասարկման շուրջօրյա ծառայությունների և տվյալների փոխանցման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված Ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունները և վճարել դրա համար:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրն խախտելն էական է համարվում, եթե

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը,

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայությունը, իսկ Ծառայության մատուցման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության մատուցումն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 **Համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» 1992 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված համաձայնագրի՝ սույն գործարքը ազատվում է ԱԱՀ-ից:**

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայությունների մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Ծառայությունների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը:

**4. Պայմանագրի գինը**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ____________ (_______________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

**5. Կողմերի պատասխանատվությունը**

5.1 Կատարողն պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման որակի և սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություններ կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. Անհաղթահերելի ուժի ազդեցություն /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների ծառայության մատուցման դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. Այլ պայմաններ**

**7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:**

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողն հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը մեկ անգամ պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է **7** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| ՀՀ առողջապահության նախարարություն<br>ք. Երևան, կառավարության 3 շենք<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013104071<br>ՀՎՀՀ 02507171 | |
| ------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | ----------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

*Հավելված N 1*
*«   » «              » 2014թ. կնքված*
***N «ՀՀ ԱՆ ԱՇԲԾ-ՇՀԾՁԲ-11/1-2014/1» ծածկագրով գնման պայմանագրի***

| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | Ծառայության տեխնիկական բնութագիրը | | | |
| | անվանումը | | չ/մ | քանակը |
| 1 | Ինտերնետ կապի տրամադրման և սպասարկման շուրջօրյա ծառայություններ | Շտապ բուժօգնության տեղեկատվական-վերլուծական համակարգի առցանց համակարգչային ծրագրի ներդրման համար անհրաժեշտ է ինտերնետ կապի տրամադրման և սպասարկման շուրջօրյա ծառայություններ, որն ապահովելու է Շտապ բուժօգնություն տրամադրող բուժհաստատությունների անխափան ոչլիմիտավորված կապ տեղեկատվական-վերլուծական համակարգին:<br>Կատարողը պետք է ապահովի ինտերնետ կապի անհրաժեշտ արագությունը, հուսալիությունը և տվյալների փոխանակման գաղտնիությունը:<br>Կատարողը պետք է Երևան քաղաքի տարածքում ինտերնետ կապի հետ կապված խնդիրները լուծի 3 ժամվա, իսկ Երևանից դուրս՝ առավելագույնը 24 ժամվա ընթացքում:<br>Կատարողը պետք է ապահովի ինտերնետ կապի շուրջօրյա տրամադրումը, սպասարկումը և տեխնիկական աջակցումը: Պետք է կիրառվի արագագործ, ապահով և ժամանակակից տեխնոլոգիաներ:<br>Մեկ աշխատանքային օրից ավել տևողությամբ անջատումներն անթույլատրելի են: Ցանցի բարելավման պլանավորված ցանցային աշխատանքների հետևանքով ինտերնետ ծառայության ընդհատումների մասին պետք է զգուշացվի առնվազն մեկ օր շուտ:<br>Կից բաշխման ցանկով ներկայացված են Շտապ բուժօգնության տեղեկատվական-վերլուծական համակարգի առցանց համակարգում ներառված ՇՕ ծառայություններ մատուցող բուժհաստատությունները և ինտերնետի համար պահանջվող նվազագույն արագությունները: | դրամ | 78 * |
| 2 | Տվյալների փոխանցման ծառայություն | Շտապօգնության ծառայության համակարգի հետ կապի ապահովման համար ՍԻՄ քարտերի միջոցով պետք է տրամադրվեն տվյալների փոխանցման և մուտքային կարճ հաղորդագրությունների ծառայություններ: Պատվիրատուն պետք է կարողանա տվյալներ փոխանակել իր կողմից ընտրված սերվերի հետ՝ ներբեռնման դեպքում ոչ պակաս քան 1024 Կբ/վ արագությամբ և վերբեռնման դեպքում ոչ պակաս քան 512 Կբ/վ արագությամբ: Ծառայությունից օգտվելու համար պետք է տրամադրվի անձնական մուտքի կետի անվանումը/APN/: Դա պետք է հնարավորություն տա օգտագործել առանձին կապուղի, որը նշանակում է, որ ընդհանուր ցանցի (3G internet) կապի տատանումների ազդեցությունը մեզ տրամադրված կապուղու որակի վրա կլինի չնչին: Ծառայության շրջանակում պետք է տրամադրվի ստատիկ IP | դրամ | 172 ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | hացցեավորում ցանկացած տրամադրված քարտի համար: | | |

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | Ավարտը |
| Պայմանագրի համար ֆինանսական միջոցների նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից 30-90 օրվա ընթացքում | Լրացուցիչ համաձայնագրի կնքման օրից, բայց ոչ ուշ քան 20.12.2014թ. |

*** Թվով 78 Շտապ բուժօգնություն տրամադրող բուժհաստատությունների ինտերնետ կապի ապահովում 7ամիս:**
**Միավորի արժեքը հաշվարկվում է մեկ բուժհաստատության համար 4 (չորս) ամիս ինտերնետ կապի ծառայության մատուցման համար:**

**** Թվով 172 պլանշետային համակարգիչների կապի ապահովում 4 ամիս:**
**Միավորի արժեքը հաշվարկվում է մեկ պլանշետային համակարգչի համար 4 (չորս) ամիս կապի ծառայության մատուցման համար:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ առողջապահության նախարարություն<br>ք. Երևան, կառավարության 3 շենք<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013104063<br>ՀՎՀՀ 02507171<br><br>---------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | « » ՍՊԸ<br>Հասցե՝<br>Բանկ<br>Հ/Հ<br>ՀՎՀՀ<br><br>---------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված 1-ին կից*
*«    »  «                »2014թ. կնքված*
***N  «ՀՀ ԱՆ ԱՇԲԾ-ՇՀԾՁԲ-11/1-2014/1»  ծածկագրով գնման պայմանագրի***

# ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

| Ստացող հաստատությունների անվանումները | Քանակ | Տվյալների փոխանցման երաշխավորված արագություն, կբ/վ |
|---|---|---|
| **Երևան, այդ թվում՝** | | |
| «Շտապ բուժօգնություն» ՓԲԸ | 2 | 4096 կբ/վ |
| **Տավուշի մարզ, այդ թվում՝** | | |
| «Իջևանի ԲԿ» ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| «Դիլիջանի ԲԿ» ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| «Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Կոթիի ԳԲԱ ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Կողբի ԳԲԱ ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Բերդի ԲԿ ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Արծվաբերդի ԱԿ ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Պառավաքարի ԳԲԱ ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| **Արարատի  մարզ, այդ թվում՝** | | |
| «Արարատի ԲԿ» | 1 | 4096 կբ/վ |
| «Արտաշատի ԲԿ» | 1 | 4096 կբ/վ |
| «Վեդու ԲԿ» | 1 | 4096 կբ/վ |
| Տափերականի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| «Մասիսի ԲԿ» ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| «Այնթապի  ԱԱՊԿ» ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| **Շիրակի  մարզ, այդ թվում՝** | | |
| Գյումրիի « Շտատ օգնություն» ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| «Ախուրյանի  բժշկական կենտրոն»ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| «Մարալիկի առողջության  կենտրոն»ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| «Արթիկի  բժշկական կենտրոն»ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Ամասիայի ԱԿ ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| **Լոռու  մարզ, այդ թվում՝** | | |
| Վանաձորի թիվ1 հիվանդանոց | 1 | 4096 կբ/վ |
| Վահագնի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| «Ալավերդու   բժշկական կենտրոն» | 1 | 4096 կբ/վ |
| Շնողի ԲԱ | 1 | 4096 կբ/վ |
| Թումանյանի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |

| | | |
|---|---|---|
| Ախթալայի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| «Սպիտակի բժշկական կենտրոն» | 1 | 4096 կբ/վ |
| Մեծ Պառնիի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| «Ստեփանավանի բժշկական կենտրոն» | 1 | 4096 կբ/վ |
| «Տաշիրի բժշկական կենտրոն» | 1 | 4096 կբ/վ |
| Մեծավանի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| **Կոտայքի մարզ, այդ թվում՝** | | |
| Նաիրիի ԲԿ | 1 | 4096 կբ/վ |
| Նոր-Հաճնի պոլիկլինիկա ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Հրազդանի ԲԿ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Ծաղկաձորի ԲԱ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Չարենցավանի ԲԿ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Բջնիի ԲԱ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Աբովյանի ԲԿ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Բյուրեղավանի ԱԿ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Գառնիի ԱԿ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Ջրվեժի ԲԱ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Առինջի ԲԱ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Արզնու ԲԱ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| **Գեղարքունիքի մարզ, այդ թվում՝** | | |
| Սևանի հիվանդանոց ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Գավառի հիվանդանոց ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Նորատուսի ԲԱ | 1 | 4096 կբ/վ |
| Մարտունու ԲԿ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Ծովինարի ԲԱ | 1 | 4096 կբ/վ |
| Վարդենիկի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| Վարդենիսի հիվանդանոց ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Ճամբարակի ԱԿ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| **Արմավիրի մարզ, այդ թվում՝** | | |
| Վաղարշապատի հիվանդանոց ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| «Արմավիրի բժշկական կենտրոն» | 1 | 4096 կբ/վ |
| Գետաշենի ԲԱ | 1 | 4096 կբ/վ |
| Արգավանդի ԲԱ | 1 | 4096 կբ/վ |
| Ջանֆիդայի ԲԱ | 1 | 4096 կբ/վ |
| Բաղրամյանի պոլ. և մոր և մանկ. Կենտրոն(«Հիսուսի Մանուկներ» ԱԿ ՓԲԸ) | 1 | 4096 կբ/վ |
| Երվանդաշատի առողջ. կենտրոն | 1 | 4096 կբ/վ |
| Մեծամորի ԲԿ | 1 | 4096 կբ/վ |
| **Սյունիքի մարզ, այդ թվում՝** | | |
| Կապանի ԲԿ | 1 | 4096 կբ/վ |
| Քաջարանի ԲԿ | 1 | 4096 կբ/վ |

| | | |
|---|---|---|
| Գորիսի ԲԿ | 1 | 4096 կբ/վ |
| Սիսիանի ԲԿ | 1 | 4096 կբ/վ |
| Անգեղակոթի ԲԱ | 1 | 4096 կբ/վ |
| Մեղրու ԲԿ | 1 | 4096 կբ/վ |
| **Արագածոտնի մարզ, այդ թվում՝** | | |
| Աշտարակի ԲԿ | 1 | 4096 կբ/վ |
| Կարբիի ԲԱ | 1 | 4096 կբ/վ |
| Ապարանի ԲԿ | 1 | 4096 կբ/վ |
| Արագածի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| Թալինի ԲԿ | 1 | 4096 կբ/վ |
| Ն. Բազմաբերդի ԲԱ | 1 | 4096 կբ/վ |
| Արագածավանի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| Ծաղկահովիտի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| **Վայոց Ձորի մարզ, այդ թվում՝** | | |
| Եղեգնաձորի ԲԿ ՊՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| «Հռիփսիմե» ԱԿ ՓԲԸ | 1 | 4096 կբ/վ |
| Ջերմուկի ԱԿ | 1 | 4096 կբ/վ |
| Վայքի ԲՄ | 1 | 4096 կբ/վ |
| **Ընդհանուր քանակը** | **78** | |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ առողջապահության նախարարություն<br>ք. Երևան, կառավարության 3 շենք<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900013104063<br>ՀՎՀՀ 02507171<br><br>--------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | « » ՍՊԸ<br>**Հասցե՝**<br>**Բանկ**<br>Հ/Հ<br>ՀՎՀՀ<br><br>--------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 3
___ ______________ 2014թ. կնքված
N պայմանագրի

**Պ ա տ վ ի ր ա տ ու**
ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013104063
ՀՎՀՀ 02507171

**Կ ա տ ա ր ո ղ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

___ ________________ **2014թ.**

Պայմանագրի անվանումը՝ ____________________ **պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ____ __________ **2014թ.**

Պայմանագրի համարը՝ N ________________

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս.Քրմոյանի, և Կատարողը՝ ________________, ի դեմս ______________________, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ___ ______________ **2014թ.** պատասխանատու ստորաբաժանման **N__** եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատուցված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը ___ _______________ **201_թ.** -ից ___ _______________ **201_թ. – ը** ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ Ծառայությունը.

| Ծառայության անվանումը և համառոտ նկարագիրը | Ծառայության քանակական ցուցանիշը | Ծառայության մատուցման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Ծառայությունն ընդունեց

______________________________
(ստորագրություն)

ազգանուն__________________________
Կ.Տ.

Ծառայությունը հանձնեց

______________________________
(ստորագրություն)

ազգանուն__________________________
Կ.Տ.